


**Բաժին մը յատկացուր
կարիքաւորին**

Անոնք, որ շարք հարսպտութիւն կը հաւաքեն եւ ողորմութիւն չեն սերմաներ, դարարկ ձեռքով կը մեկնին այս աշխարհէն եւ կ'առաքուին անպանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը այս մէկը կ'իմացնէ երբ կ'ըսէ. «Աշխարհիկ հարսպտութիւնը գործածեցէք այնպէս մը, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք. որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք յաիպենական յարկերուն մէջ ընդունին» (Ղուկ. 16.9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Միտոյ հեղափոխութիւնը եղէք ու նաեւ նախանձախնդիր աղքատներու ողորմութեան, որովհետեւ դուք ալ Քրիստոսէ ողորմութիւն պիտի սպանաք» (Ա. Կոր. 14.1): Ո՛չ մէկ բան կը թելուցնէ մեղքին ծանրութիւնը, բացի աղքատին արուած ողորմութենէն եւ գութէն: Ինչպէս սուրբ Դանիէլ Նարուգոյնոստրին կ'ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պարճառաւ հիւանդացած էր մարգարէին կը հարցնէր, թէ ինչպիսի՞ դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ, որպէս բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն ըլլալը, ո՛չ բուրձը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգտակար ըլլալ, այլ գնա՛ եւ մեղքերդ ողորմութեամբ քաւ՛, իսկ անօրէնութիւններդ՝ աղքատներուն գթալով: Այս արարքն է, որ քեզ պիտի արդարացնէ եւ այս ճանապարհն է, որ քեզ յաիպենական կեանքի պիտի առաջնորդէ» (Դանիէլ 4.27) :

ՍՐԲԱՆՈՅՍ ՄԻՐՈՆԸ



«Միւռոն» բառը տառադարձութիւնն է յունարէն՝ μύρον բառին եւ կը նշանակէ՝ անուշաբոյր իւղ: Անուշաբոյր իւղի պատրաստութիւնն ու գործածութիւնը սուրբ գրային հիմք ունի: Աստուած ինքն էր, որ Մովսէս մարգարէին պատուիրեց անուշաբոյր իւղ պատրաստել եւ նոյնիսկ թուեց այն պատուական համեմտեքը, որոնք պէտք էր գործածուէին իւղի պատրաստութեան համար (Ելից 30.22-25: Տէ՛ս նաեւ 35.8,28, ելին): Հին Կտակարանի մէջ պատրաստուած այս անուշաբոյր իւղը կը կոչուէր «Օծման իւղ» (Ել. 30.25, 35.8,15,28, 39.38, ելին): Անձ մը կամ բան մը օծելու համար օծման իւղէն կը գործածուէր: Քահանաները օծման իւղով կ'օծուէին (Ել. 29.7, 30.30: Ղու. 6.20, 8.12,30, 16.32, 21.10,12, ելին): Քահանաներուն հագուստներն ալ անով կ'օծուէին, կ'օրհնուէին ու կը սրբուէին (Ել. 29.21, Ղու. 8.30): Եւ տակաւին, նոյն այդ իւղով կ'օծուէին վկայութեան խորանն ու տապանակը, սուրբ սեղանն ու անոր բոլոր անօթները, աշտանակն ու անոր գործիքները, խունկին սեղանը՝ ողջակէզին սեղանը՝ իր բոլոր գործիքներով եւ աւազանն ու անոր խարիսխը (Ել. 30.26-28):



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Մշ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 5 ՅՈՒՆԻՍ 2022 ԹԻՒ 22

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Գրծ. 2.1-21: Յհ. 14.25-31

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍ 14.25-31

Այս բոլորը խօսեցայ ձեզի, քանի տակաւին ձեզի հետ եմ: Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը ձեզի պիտի դրկէ իմ անունովս, ան ձեզի ամէն ինչ պիտի սորվեցնէ եւ յիշեցնէ ինչ՝ որ ես ձեզի ըսի: Խաղաղութիւն կը թողում ձեզի: Իմ խաղաղութիւնս է, որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է: Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք: Լսեցէ՛ք ինչ որ ըսի ձեզի, թէ. *«Ահա կ'երթամ, բայց կրկին պիտի գամ ձեզի»*: Եթէ զիս կը սիրէք ուրախ պիտի ըլլաք, որ Հօրս կ'երթամ, որովհետեւ Հայրս ինձմէ մեծ է: Այս բոլորը ձեզի ըսի նախ քան պատահիլը, որպէսզի երբ պատահի՝ այն ատեն հաւատաք: Այլեւս երկար պիտի չխօսիմ ձեզի, որովհետեւ ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն չունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ, թէ ես Հայրը կը սիրեմ եւ ա՛յդ է պատճառը, որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ: Ելէ՛ք, երթանք այստեղէն:

=====

Մի՛ խռովիք եւ մի՛ վախճաք

Քրիստոս յանախ իր աշակերտներուն կը փառաբանէր ըսելով մի՛ վախճաք, որովհետեւ վախը խաւարի որդիներուն կը պատկանի: Անոնք, որոնք Քրիստոսի լոյսը զգացած են վախը գոյութիւն չ'ունենար անոնց կեանքին մէջ: Եւ ահա այսօր Հոգեգալուստի տօնին առիթով Քրիստոս կու գայ անտարանի քամբով յիշեցնելու բոլոր այն հաւատացեալներուն, որոնք Քրիստոսը ունին իրենց կեանքին մէջ, թէ պէտք է միշտ փառաբար ապրին իրենց կեանքը: Միշտ յիշեմք սաղմոսասացի խօսքը, որ կ'ըսէ. «Տէրն է իմ լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախճամ ես: Տէրն է իմ կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ ես (Սաղմոս 27. 1):

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ

Քրիստոսի Յարութենէն 50 օր ետք, երբ Երուսաղէմի մէջ մեծ թիւով ժողովուրդ հաւաքուած էր Պենտեկոստէի առթիւ, առաքեալները Տիրոջ պատուէրին համաձայն վերնատուն հաւաքուեցան: Անոնք մէկ սիրտ դարձած կ'աղօթէին՝ սպասելով Ս. Հոգիին գալուստը, ինչպէս Յիսուս խոստացած էր: Յանկարծ սաստիկ հովի ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Ս. Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար:

Առաքեալները զօրանալով սկսան քարոզել ու վկայել Յիսուսի մասին: Աշխարհի տարբեր ժողովուրդներ, որոնք Երուսաղէմ հաւաքուած էին անակնկալի եկան, որովհետեւ կը լսէին, թէ ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը իրենց սեփական լեզուով կը խօսի: Պետրոս առաքեալի ճառէն ետք, 3000 հոգի դարձի եկան եւ մկրտուեցան Յիսուս Քրիստոսի անունով:

Ս. Հոգեգալուստը եղաւ Հրեաներու Ձատիկէն 50 օր ետք՝ Պենտեկոստէին, երբ Մովսէս մարգարէին միջոցաւ Աստուած հրեաներուն պարգեւեց Տասնաբանեան:

ԲԱՐԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ
ԲՈՒՈՐ ԱՆՈՆՑ ՈՐՈՆՔ ԳԱԼՈՒՍՏ
ԱՆՈՒՆԸ ԿԸ ԿՐԵՆ

- Որո՞նք են մարմնին թշնամի եւ կործանարար մոլութիւնները:

Եօթը մահացու մեղքեր կան, որոնք կը ծուարին մարդու ներսիդին եւ կը կրծեն գայն:

- 1.- Հպարտութիւնը կը կործանէ մարդը: (Սոսկ. ԻԹ. 23):
- 2.- Նախանձը ոսկորներու փտութիւն է: (Սոսկ. ԺԴ. 30):
- 3.- Բարկութիւնը մարդուն վնաս կը պատճառէ (Սոսկ. ԺԹ. 19), կը ցնցէ մարմինը ու կը սկարացնէ շիրերը:
- 4.- Ծուլութիւնը իրեն ենթական կ'աղփատացնէ ու կը մեռցնէ: (Սոսկ. Ի. 13, ԻԱ. 25):
- 5.- Ագահութիւնը իրեն անձնատուր երողները կը մեռցնէ: (Սոսկ. Ա. 19):
- 6.- Որկրամոլութիւնը (որուն ծիրին մէջ կ'իյնան նաեւ արբեցութիւնն ու ծխամոլութիւնը) բազմաթիւ հիւանդութիւններու դուռ կը բանայ: Ամենայն քաղցրահամ եւ օգտակար ուտելիքը՝ մեղրն անգամ եթէ մէկը անյագօրէն քաշակէ, գայն կը փսխէ ու իր մարմնին առողջութեան վնաս կը բերէ: (Սոսկ. ԻԵ. 16, 27): Իսկ խմիչքներն ու ծխախոտի մոլութիւնները մարդու մարմինը կը գործեն այլազան հիւանդութեանց վիհին մէջ:
- 7.- Բողջախոտութիւնը կ'ապականէ մարմինը, միտքն ու հոգին, ու մարդը կը մղէ դէպի անբարոյութիւն: (Մատթ. ԺԵ. 19):

Այս եօթը մոլութիւնները մարդուն մէջ կը յառաջացնեն անձնասիրութիւն, փառասիրութիւն, ցանկութիւն, անտեղի դժգոհութիւն, մտահոգութիւն, ջղաշիւն խանգարում, մեղամաղձոտութիւն եւ սրտի խոռվութիւն:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ՍԿՍԻՍ ԵՒ ԿՎԻՎՐՏԵՍ ՕՐԳ

Գալիք օրերու համար մեր հոգեւոր խորհրդածութեան առանցքը պիտի դարձնենք Յովհաննէսի Աւետարանին մէջ յիշուած շնացող կնոջ դրուագը (Յհ. 8.3-11), որմէ շատ բան ունինք սորվելիք: Յհ. 8.2-ին մէջ կը կարդանք, որ Յիսուս առաւօտ կանուխ տաճար գնաց եւ ժողովուրդը իրեն կու գար եւ ինք անոնց կ'ուսուցանէր: Յիսուս իր օրը կ'աւարտէր աղօթքով (Յհ. 8.1), եւ օրը կը սկսէր աղօթքով եւ ուսուցանելով: Նայեցէք սակայն Փարիսէցիներուն: Անոնք իրենց օրը կ'աւարտէին չար խորհուրդներ եւ ծրագիրներ մշակելով եւ օրերնին կը սկսէին անգթութեամբ, քննադատութեամբ, եւ մեղաւոր մարդիկ փնտռելով եւ անոնց մահը պահանջելով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ
Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Միւրեւի ընթերցող, դուն ի՞նչպէս կը սկսիս եւ կ'աւարտես օրդ: Աղօթքով, թէ չար ծրագիրներ մշակելով: Վստահ եղի՛ր, որ եթէ օրդ աւարտես չար բաներ ծրագրելով եւ չար բաներ մտածելով, անկասկած որ Փարիսէցիներուն նման օրդ պիտի սկսիս չարիք գործելով:

ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ԳԻՏԱԿԱԼ, ԹԵ ԿԱՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՊԵՇՏՊԵՆԻ ԿՐԿԱՐԸ, ԿՎԻՎՐՔ՝ Սաղմոս 17

Ո՛վ Տէ՛ր, լսէ՛ արդար բողոքս, մտի՛կ ըրէ աղաղակս, ականջ տուր աղօթքիս, որ նենգաւոր շրթներէ չի գար: Դատավճիռս դո՛ւն տուր, տե՛ս իմ ուղիղ ըլլալս: Դատավճիռս դո՛ւն տուր: Գիշեր ատեն եկար եւ փորձեցիր սիրտս, կրակով քննեցիր եւ չարութիւն չգտար մէջս, ո՛չ ալ բերնիս մէջ անիրաւութիւն: Տեսայ մարդոց գործերը, բայց քու խօսքիդ հետեւելով՝ հեռու մնացի արիւնահեղ մարդոց ապրելակերպէն: Քայլերս քու շաւիղներուդ մէջ պահէ, որպէսզի ընթացքս չշեղի: Ես քեզ կը կանչեմ, որովհետեւ գիտեմ, թէ պատասխան պիտի տաս, ո՛վ Աստուած, ականջդ ինձի խոնարհեցուր, լսէ՛ խօսքերս: Մեղանջի կերպով ցոյց տուր քու սէրդ, դուն՝ որ քեզի ապաւինողները քու աջովդ կը փրկես իրենց հակառակորդներէն: Աչքի բիբի պէս պահէ զիս պահպանէ ամբարիշտներէն, որոնք կեանքիս կը սպառնան մահացու թշնամիներէս, որոնք պաշարած են զիս: Իրենց հարստութեան վստահած, եւ գութը մոռցած՝ ամբարտաւանութեամբ կը բանան իրենց բերանը: Ահա կը հետապնդեն զիս, եւ զիս պաշարած՝ ակնդէտ կը հետեւին ինձի, զիս գետին տապալելու համար առիւծի մը պէս՝ որ կ'ուզէ բզկտել, կորիւնի մը պէս՝ որ դարան մտած կը սպասէ: